

Ոչ պաշտոնական թարգմանություն

SOFT LOAN AGREEMENT

(hereinafter called the “Agreement”)

ԱՐՏՈՆՅԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

/այսուհետ՝ Պայմանագիր/

under the
Austrian Export Promotion Scheme
entered into

Ավստրիայի արտահանման խթանման սխեմայի ներքո
կնքված

Closed Joint Stock Company “NORK-MARASH” Medical Center”

(hereinafter called the “Borrower”)

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

/այսուհետ՝ Փոխառու/

and

և

ERSTE GROUP BANK AG

(hereinafter called the “Lender”)

Էրստե Գրուպ Բանկի AG

/այսուհետ՝ Փոխատու/

միջև

for the Project Delivery Contract No. 01 ME/AR/16

Table of Contents

PREAMBLE	3
DEFINITIONS	4
1 CREDIT FACILITY AND FACILITY ACCOUNT.....	8
1.1 The Credit Facility	8
1.2 Facility Account	9
2 INTEREST	9
2.1 Interest on Facility Account.....	9
2.2 Default Interest	10
3 FEES AND EXPENSES	10
3.1 Commitment Fee	10
3.2 Management Fee	11
3.3 OeKB Guarantee Charges and Costs	11
3.4 Expenses	12
3.5 Increased Costs	13
4 REPAYMENT.....	14
4.1 Repayment.....	14
4.2 Optional Prepayment and Cancellation.....	15
4.3 Illegality	16
5 PAYMENTS.....	16
5.1 Notice of Payment	16
5.2 Method of Payment	16
5.3 Payments free of Withholding Taxes and other Charges.....	17
5.4 Appropriation of Payments	18
6 CONDITIONS PRECEDENT	19
7 EVENTS OF DEFAULT	21
7.1 Events of Default	21
7.2 Action upon Events of Default	25
8 WARRANTIES AND UNDERTAKINGS	26
8.1 Warranties	26
8.2 Undertakings	29
9 GOVERNING LAW, JURISDICTION AND WAIVER OF IMMUNITY.....	32
10 MISCELLANEOUS.....	33
10.1 OeKB Guarantee	33
10.2 Notices	34
10.3 Amendments and Descriptive Headings.....	36
10.4 Waivers, Remedies Cumulative	36
10.5 Indemnities.....	36
10.6 Partial Invalidity	38

10.7 Assignment	38
10.8 Data Disclosure	39

- Annex 1 – Payment Procedure
- Annex 2 – Form of Legal Opinion
- Annex 3 – Form of Confirmation regarding Project Delivery Contract
- Annex 4 – Form of Acceptance of Appointment of Process Agent
- Annex 5 – Form of Guarantee Agreement

<u>PREAMBLE</u>	ՆԱԽԱԲԱՆ
WHEREAS On [date], the Closed Joint Stock Company “Nork-Marash”, Medical Center (hereinafter called the “Project Buyer”) and VAMED ENGINEERING GmbH, (hereinafter called the “Project Exporter”) have entered into Project Delivery Contract (No. 01 ME/AR/16) concerning the supply, installation and maintenance of medical equipment as well as relevant preparatory works for the Nork Marash Medical Center in the amount of EUR 7.000.000, (hereinafter called the “Project Delivery Contract”). The Republic of Armenia, represented by the Ministry of Finance, has agreed to provide the Lender with a guarantee in the amount of the Agreement of EUR 7.000.000,— plus accrued interest and any other expenses. The Guarantee will be issued in a separate document (the Guarantee Agreement) by the Ministry of Finance. Oesterreichische Kontrollbank Aktiengesellschaft (hereinafter called “OeKB”) has been authorised by its competent authorities to promise the financing of the Project on concessional terms according to the OECD Consensus with a concessional level of 35,38% by refinancing the soft loan granted by the Lender hereunder. The Lender has agreed to provide a soft loan for financing 100 % of the contract value of the Project Delivery Contract covered by a guarantee of OeKB on behalf of the Republic of Austria on the terms and subject to the conditions of this Agreement. In assuming liabilities hereunder the Borrower is acting as principal and primary obligor vis-à-vis the Lender, and not as an agent.	_____թ.-ին «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» Փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ Ծրագրի Գնորդ/ և VAMED ENGINEERING GmbH /այսուհետ՝ Ծրագրի Իրականացնող/ կնքեցին «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի համար բժշկական սարքավորումների մատակարարման, տեղադրման և սպասարկման, ինչպես նաև համապատասխան նախապատրաստական աշխատանքների կատարման վերաբերյալ 7.000.000 ԵՎՐՈ արժողությամբ մատակարարման թիվ 01 ME/AR/16 պայմանագիրը /այսուհետ՝ Ծրագրի Իրականացման Պայմանագիր/: Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ֆինանսների նախարարության, համաձայնել է Փոխատուին տրամադրել փոխառության երաշխիք՝ երաշխավորելով 7.000.000 եվրո արժողությամբ Պայմանագրի գումարը՝ գումարած առաջացած տոկոսները և ցանկացած այլ ծախսերը: Երաշխիքը պետք է տրամադրվի Ֆինանսների նախարարության կողմից առանձին փաստաթղթի ձևով (Երաշխիքի պայմանագիր): Oesterreichische Kontrollbank Aktiengesellschaft (այսուհետ՝ “OeKB”) լիազորված է իրականացնելու Ծրագրի ֆինանսավորումը արտոնյալ պայմաններով՝ ըստ OECD համաձայնության՝ 35.38% արտոնյալ պայմաններով վերաֆինանսավորելով փոխառությունը, որը սույնով տրամադրվում է Փոխատուի կողմից: Սույն Պայմանագրի պայմաններին ու կարգին համապատասխան Ավստրիայի Հանրապետության անունից OeKB Երաշխիքով Փոխատուն տրամադրում է փոխառություն՝ Ծրագրի Իրականացման Պայմանագրի 100% արժեքը ֆինանսավորելու նպատակով: Սույնով Փոխառուն ստանձնելով պարտավորություններ Փոխատուի առջև՝ գործում է որպես հիմնական և առաջնային

This Agreement and the Project Delivery Contract are separate and independent agreements. No failure of the Project Exporter or the Project Buyer to fulfil its obligations under the Project Delivery Contract shall affect the obligations of the Borrower towards the Lender, nor shall the Lender be liable for any failure of the Project Exporter or the Project Buyer. NOW IT IS HEREBY AGREED as follows: <u>DEFINITIONS</u> In this Agreement and the Annexes hereto the following expressions shall have the following meanings: “Agreement” means this Soft Loan Agreement. “Annex” means a document attached to this Agreement the terms of which shall be deemed to be incorporated into this Agreement and form a part thereof. “Article” means an Article of this Agreement. “Availability Period” means the period commencing on the Effective Date until 12 (twelve) months thereafter but at the latest until [date]. “Borrower” means Closed Joint Stock Company “NORK-MARASH” Medical Center, 13 Armenakyan Str., Nork, Yerevan, 0047, Republic of Armenia. “Borrowing” means a tranche of the Credit Facility disbursed or to be disbursed hereunder.	պարտապան, ոչ թե որպես գործակալ: Սույն Պայմանագիրը և Ծրագրի Իրականացման Պայմանագիրը հանդիսանում են առանձին և անկախ պայմանագրեր: Ծրագրի Իրականացնողի կամ Ծրագրի Գնորդի կողմից Պայմանագրով ստանձնած պարտականությունների ոչ պատշաճ կատարումը չի կարող ազդել Փոխատուի առջև Փոխառուի պարտականությունների և ոչ էլ Ծրագրի Իրականացնողի կամ Ծրագրի Գնորդի առջև Փոխատուի պարտականությունների ոչ պատշաճ կատարման համար: Սույնով կողմերը համաձայնեցին հետևյալի մասին՝ <u>ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ</u> Սույն Պայմանագրում և Հավելվածներում հետևյալ արտահայտությունները այսուհետ կունենան հետևյալ նշանակությունը՝ Պայմանագիր - սույն արտոնյալ վարկային պայմանագիրը: Հավելված - սույն Պայմանագրին կից փաստաթուղթ, որի դրույթները համարվում են ներառված սույն Պայմանագրում և կազմում են վերջինիս անբաժանելի մասը: Հոդված - սույն Պայմանագրի կետերը: Գործողության ժամկետ - Պայմանագրի կնքման պահից սկսած 12 /տասներկու/ ամիս, բայց ամենաուշը մինչև [date]. Փոխառու - «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» Փակ բաժնետիրական ընկերություն, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0047, Նորք, Ա. Արմենակյան փող., 13: Փոխառություն – սույնով տրամադրված կամ տրամադրվող Վարկային գիծը:
---	---

“Budget” means the budget of the Borrower for the year ending on 31 December and any annual budget thereafter approved in accordance with the statutory prescribed procedure. “Business Day” means a day (other than a Saturday or Sunday) on which banks are open for general business in Vienna and Yerevan and which is also a TARGET Day. For the avoidance of doubt, in case reference is made to “days” in this Agreement, it shall mean a reference to calendar days. “Commitment Fee” means the fee defined in Article 3.1. “Credit Facility” means the credit facility as defined in Article 1.1. “Effective Date” means the date defined in Article 1. “EUR” or “Euro” means the single currency of the member states of the European Union, adopting the Euro as their currency in accordance with the EMU legislation. “Event of Default” means any event or circumstance specified as such in Article 7. “Facility Account” means the account opened in the name of the Borrower in accordance with the provisions of Article 1.2. “Guarantee” means the guarantee issued by the Republic of Armenia represented by the Ministry of Finance. “Guarantee Agreement” means the Guarantee Agreement issued by the Republic of Armenia represented by the Ministry of Finance, which is guaranteeing 100% of contract value of the Project Delivery Contract of EUR 7.000.000.	Բյուջե - Փոխառուի բյուջեն՝ ավարտված յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ով և ցանկացած տարեկան բյուջե՝ հաստատված օրենքով սահմանված կարգով: Աշխատանքային օր - այն օրը /բացի շաբաթ և կիրակի օրերից/, երբ բանկերն աշխատում են Վիենայում և Երևանում՝ այսինքն բանկային օրը: Տարակարծությունից խուսափելու համար սույն Պայմանագրում «օրեր» հղման դեպքում այն կնշանակի օրացուցային օր: Միջնորդավճար - 3.1 կետով սահմանված գումարը: Վարկային գիծ - Պայմանագրի 1.1 կետում սահմանված վարկային միջոցը: Ուժի մեջ մտնելու ամսաթիվ - Պայմանագրի 6-րդ կետում սահմանված ամսաթիվը: Եվրո - Եվրոպական միության անդամ պետությունների միասնական փոխարժեք՝ ընդունված որպես իրենց տարադրամ՝ համաձայն EMU օրենսդրությամբ: Դեֆոլտի դեպք - Պայմանագրի 8-րդ կետով սահմանված ցանկացած դեպք կամ հանգամանք: Հաշվեհամար - Պայմանագրի 1.2 կետի համաձայն Փոխառուի անունով բացված հաշվեհամար: Երաշխիք - Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ֆինանսների նախարարության կողմից տրված երաշխիք: Երաշխիքի պայմանագիր - Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Ֆինանսների նախարարության կողմից տրված Երաշխիքի Պայմանագիր, որով երաշխավորվում է 7.000.000 ԵՎՐՈ արժողությամբ Ծրագրի
---	---

“Guarantor” means the Republic of Armenia represented by the Ministry of Finance, 1 Melik Adamyan str., Yerevan, 0010, Armenia. “Final Effective Date” means the date defined in Article 7. “Lender” means Erste Group Bank AG, Am Belvedere 1, 1100 Vienna, Austria, registered at the Commercial Court of Vienna under registration no. 286283f. “Loan” means the aggregate principal amount of Borrowings disbursed hereunder and for the time being outstanding. “Management Fee” means the fee defined in Article 3.2. “Material Adverse Effect” means a reference to something which in the reasonable opinion of the Lender might have a material adverse effect on (i) the operation, business, assets, financial condition or prospects of the Borrower; or (ii) the ability of the Borrower to perform any of its obligations under the Agreement or under any related agreement as and when such obligations fall due; or (iii) the ability of the Lender to exercise or enforce any rights under the Agreement or under any related agreement. “OeKB” means Oesterreichische Kontrollbank Aktiengesellschaft, Am Hof 4, A-1011 Vienna, Austria. “OeKB Guarantee” means an export guarantee issued or to be issued by OeKB in respect of the	իրականացման Պայմանագրի գնի 100%-ը: Երաշխավոր - Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Ֆինանսների նախարարության, Հայաստան, ք. Երևան, 0010, Մելիք Ադամյան փող. 1: Վերջնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ - Պայմանագրի 7-րդ կետով սահմանված ժամկետը: Փոխատու - Երստե Գրուպ Բանկ AG, Am Belvedere 1, 1100 Վիենա, Ավստրիա, գրանցված՝ no. 286283f համարով՝ Commercial Court of Vienna. Վարկ - սույնով տրամադրված դեռևս չմարված փոխառության հիմնական մայր գումարը: Սպասարկման վճար - Պայմանագրի 3.2 կետով նախատեսված գումարը: Էական բացասական ազդեցություն - հղումն ինչ-որ բանի, որը Փոխատուի կարծիքով կարող է ունենալ զգալի էական բացասական ազդեցություն՝ (i) Փոխառուի գործողության, բիզնեսի, ակտիվների, ֆինանսական վիճակի և հեռանկարների վրա, կամ (ii) սույն Պայմանագրի կամ վերաբերելի այլ պայմանագրերի համաձայն՝ Փոխառուի պարտականությունները կատարելու կարողության վրա, երբ այդ պարտականությունները խախտվում են, (iii) սույն Պայմանագրի կամ վերաբերելի այլ պայմանագրերի համաձայն՝ Փոխատուի իր իրավունքներն իրականացնելու վրա: OeKB - Oesterreichische Kontrollbank Aktiengesellschaft, Am Hof 4, A-1011, Վիենա, Ավստրիա: OeKB Երաշխիք - 1981թ.-ի փոփոխված Արտահանման խթանման ակտին
---	--

Agreement on behalf of the Republic of Austria pursuant to the Export Promotion Act 1981, as amended. “OeKB Refinancing Agreement” means a refinancing agreement concluded between OeKB and the Lender in respect of the Agreement for 100 % of the Credit Facility. “Payment Procedure” means the procedure for the payment of Borrowings specified in Annex 1. “Project” means the supply, installation and maintenance of medical equipment as well as relevant preparatory works for the Nork Marash Medical Center in the amount of EUR 7.000.000, -- “Project Buyer” means Closed Joint Stock Company “NORK-MARASH” Medical Center, 13 Armenakyan Str., Nork, Yerevan 0047, Republic Armenia “Project Delivery Contract” means the Project Delivery Contract No. 01 ME/AR/16 concerning the supply, installation and maintenance of medical equipment as well as relevant preparatory works for the Nork Marash Medical Center in the amount of EUR 7.000.000,--concluded on [date] between the Project Buyer and the Project Exporter relating to the Project and including any subsequent amendments thereto, if any. “Project Exporter” means VAMED ENGINEERING GmbH, Sterngasse 5, 1230 Vienna , Austria	համապատասխան՝ Ավստրիայի անունից սույն Պայմանագրի վերաբերյալ OeKB-ի կողմից տրված երաշխիք: OeKB Վերաֆինանսավորման Պայմանագիր - OeKB-ի և Փոխատուի միջև կնքված վերաֆինանսավորման պայմանագիր՝ 100% Վարկային գծի պայմանագրի վերաբերյալ: Վճարման ընթացակարգ - Հավելված 1-ով սահմանված Փոխառության վճարման ընթացակարգը: Ծրագիր – «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի համար բժշկական սարքավորումների մատակարարման, տեղադրման և սպասարկման, ինչպես նաև համապատասխան նախապատրաստական աշխատանքների կատարում 7.000.000 ԵՎՐՈ-ի չափով: Ծրագրի Գնորդ - «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, 0047, Նորք, Ա. Արմենակյան փող., 13: Ծրագրի Իրականացման Պայմանագիր - «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնի համար բժշկական սարքավորումների մատակարարման, տեղադրման և սպասարկման, ինչպես նաև համապատասխան նախապատրաստական աշխատանքների կատարման վերաբերյալ 7.000.000 ԵՎՐՈ արժողությամբ թիվ 01 ME/AR/16 մատակարարման պայմանագիր՝ կնքված [date] Ծրագրի Գնորդի և Ծրագրի Իրականացնողի միջև՝ կապված Ծրագրի հետ և ներառելով ցանկացած հետագա փոփոխություն /երեւ այդպիսիք կլինեն/: Ծրագրի Իրականացնող - VAMED ENGINEERING GmbH, Շտեռնգասսե 5, 1230, Վիեննա, Ավստրիա
---	--

“Security Interest” means a mortgage, pledge, lien, charge, assignment or transfer for security purposes, hypothecation, retention of title arrangement or other security interest securing any obligation of any person or any other agreement, preferential right or arrangement having a similar effect. “Signing Date” means the date on which the Agreement is signed by both the Borrower and the Lender. “Starting Point” means the date of the Accumulated Acceptance Certificate signed by the Project Buyer and the Project Exporter. “TARGET 2” means the Trans-European Automated Real-time Gross Settlement Express Transfer payment system which utilises a single shared platform and which was launched on 19 November 2007. “TARGET Day” means any day on which TARGET2 is open for the settlement of payments in Euro. “Tax/Taxes” means any present and future tax, levy, impost, duty, stamp duty, fee, deduction or withholding or other charge of a similar nature (including, without limitation, any penalty or interest payable in connection with any failure to pay or any delay in paying any of the same) and "taxes" and "taxation" shall be construed accordingly. 1 CREDIT FACILITY AND FACILITY ACCOUNT 1.1 The Credit Facility The Lender hereby agrees to make available to	Ապահովման իրավունք - գրավ, գրավական, արգելանք, վճար, երաշխավորություն կամ փոխանցում անվտանգության նկատառումներով, հիփոթեք, սեփականության իրավունքի պահում կամ այլ ապահովման իրավունք, որն ապահովում է ցանկացած անձի ցանկացած պարտավորություն կամ այլ նմանատիպ ազդեցություն ունեցող համաձայնություն, արտոնյալ իրավունք կամ կարգավորում: Կնքման օր - այն ամսաթիվը, երբ Փոխառուն և Փոխատուն կնքում են սույն Պայմանագիրը: Սկսվելու օր - Ծրագրի Գնորդի և Ծրագրի Իրականացնողի միջև կնքված Ընդհանուր Ընդունման Ակտի ամսաթիվը: TARGET 2 - Trans-European Automated Real-time Gross Settlement Express Transfer վճարման համակարգը, որն օգտագործում է մեկ ընդհանուր հարթակ և որը գործարկվել է 19 նոյեմբերի 2007 թվականին: Բանկային օր - ցանկացած օր, երբ TARGET 2 բաց է եվրոյով վճարումների կատարման համար: Հարկ/Հարկեր - ներկա և ապագա հարկերը, գանձումները, պարտքերը, պետական տուրքերը, վճարները, նվազեցումների կամ պահումների և նման այլ ծախսերը /ներառյալ՝ առանց սահմանափակումների, ցակացած տուգանք կամ վճարման ենթակա գումար՝ կապված վճարման կամ վճարման ժամկետի խախտման հետ/: 1. ՎԱՐԿԱՅԻՆ ԳԻԾ ԵՎ ՀԱՇՎԵՀԱՄԱՐ: 1.1 Վարկային գիծ Սույնով Փոխատուն համաձայնում է
---	---

the Borrower a Credit Facility in the amount of EUR 7.000.000 (in words: seven million Euro) on the terms and conditions set forth in this Agreement, provided that: (i) Borrowings shall be made directly to the Project Exporter in accordance with the Payment Procedure specified in Annex 1, shall be made on a Business Day within the Availability Period and shall be applied towards payment of the price due to the Project Exporter under the Project Delivery Contract. The Lender is, however, not bound to monitor or verify the use of the Loan. Any disbursement to the Project Exporter by the Lender hereunder shall constitute a Loan hereunder and will automatically cause the Lender to debit the Facility Account with the respective amount; (ii) the aggregate of the Borrowings shall not exceed the Credit Facility; (iii) the Lender will not make any payment after the end of the Availability Period.	Փոխառուին տրամադրել 7.000.000 ԵՎՐՈ /յոթ միլիոն ԵՎՐՈ/ գումարի չափով Վարկային գիծ՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և հետևյալ պայմաններով՝ (i) Փոխառությունը տրվում է ուղղակիորեն Ծրագրի Իրականացնողին՝ համաձայն Հավելված 1-ով սահմանված վճարման ընթացակարգի, իրականացվում է աշխատանքային օրում և վճարումը կատարվում է Ծրագրի Իրականացնողին՝ Ծրագրի Իրականացման Պայմանագրի շրջանակներում: Այնուամենայնիվ Փոխատուն պարտավոր չէ վերահսկել կամ ստուգել Վարկի օգտագործումը: Այսուհետ Փոխատուի կողմից Ծրագրի Իրականացնողին տրված ցանկացած հատկացում կկազմի Վարկը և ինքնաբերաբար Փոխատուն համապատասխան գումարով կհամարվի պարտատեր: (ii) փոխառությունների հանրագումարը չպետք է գերազանցի Վարկային գիծը: (iii) Գործողության ժամկետի ավարտից հետո Փոխատուն այլևս որևէ վճարում չպետք է կատարի:
1.2 Facility Account The Lender shall open a EUR Facility Account in the name of the Borrower, designated as "Facility Account Project NORK-MARASH" Medical Equipment Supply. Each Borrowing made hereunder shall be debited to the Facility Account, value the date of payment of such Borrowing by the Lender and the Lender will inform the Borrower thereof by letter or fax.	1.2 Հաշվեհամար Փոխատուն պետք է Փոխառուի անունով բացի ԵՎՐՈ-ի հաշիվ՝ որպես Նորք-Մարաշի բժշկական սարքավորումների մատակարարման ծրագրի վարկային գծի հաշվեհամար: Սույնով տրված յուրաքանչյուր փոխառություն մուտքագրվում է այդ հաշվեհամարին, Փոխատուի կողմից պահպանելով այդ փոխառության վճարման ամսաթիվը և վերջինս նամակի կամ ֆաքսի միջոցով տեղեկացնում է Փոխառուին:
2 INTEREST 2.1 Interest on Facility Account With the exception of any default interest payable in accordance with Article 2.2 Error! Reference source not found. no interest shall be payable on the amount of the Loan which is from time to	2. ՏՈԿՈՍՆԵՐ 2.1 Հաշվեհամարի տոկոսներ Բացառությամբ 2.2 հոդվածով սահմանված վճարման ենթակա տոկոսներից, ոչ մի տոկոս չպետք է վճարվի Վարկի գումարին, որը ժամանակ առ ժամանակ մարվում է

time outstanding on the Facility Account. 2.2 Default Interest In the event of failure by the Borrower to make payment on the due date of any sum due hereunder, the Borrower shall pay interest on such sum from the date of such failure up to the date of actual payment at a rate determined by the Lender to be 2% (in words: two per cent) per annum above the then available interest rate of OeKB. Default Interest due in accordance with this Article shall accrue from day to day, shall be computed on the basis of the actual number of days elapsed and a year of 360 days, and shall be paid quarterly in arrears by the Borrower to the Lender on March 31st, June 30th, September 30th and December 31st in each year. In case refinancing is not available from OeKB, the applicable interest rate (to be increased by the default interest margin as set out above) shall be determined by the Lender to be the rate at which Austrian prime banks at the relevant time may refinance themselves in the European Union interbank money market for a period of 30 (thirty) days (or such shorter or longer periods as the Lender in its sole discretion may select).	հաշվեհամարին: 2.2 Ժամկետանց գումարի տոկոսներ Փոխառուի կողմից սույն Պայմանագրով սահմանված վճարման ժամկետի խախտման դեպքում Փոխառուն այդ գումարից վճարում է տոկոսներ՝ սկսած կետանցի օրվանից մինչև փաստացի վճարման պահը՝ ըստ Փոխատուի կողմից սահմանված տարեկան 2%/երկու տոկոս/տոկոսադրույքի՝ համաձայն OeKB բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Սույն կետով սահմանված տոկոսները օրեցօր ավելանում են և հաշվարկվում են փաստացի լրացած օրերի քանակի հիման վրա և Փոխատուի կողմից Փոխառուին են վճարվում եռամսյակը մեկ՝ յուրաքանչյուր տարվա մարտի 31-ին, հունիսի 30-ին, սեպտեմբերի 30-ին և դեկտեմբերի 31-ին: Այն դեպքում, երբ OeKB-ի կողմից չկա վերաֆինանսավորում, կիրառելի տոկոսադրույքը /որի չափը կարող է աճել մինչև վերը նշված սահմանաչափը/ սահմանվում է Փոխատուի կողմից՝ այն հաշվարկային դրույքով, որով Ավստրիական առաջատար բանկերը տվյալ ժամանակահատվածում կարող են վերաֆինանսավորվել Եվրոպական միության միջբանկային դրամական շուկայում 30 օրյա ժամկետում /կամ ավելի կարճ կամ ավելի երկար ժամանակահատվածում, որը Փոխատուն կարող է ընտրել իր հայեցողությամբ/:
3 FEES AND EXPENSES The Borrower's obligations under this Article 3 shall remain in full force and effect irrespective of the actual disbursement of any Loan and shall survive any premature repayment or a cancellation or dissolution of this Agreement. 3.1 Commitment Fee	3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ: Սույն կետով սահմանված Փոխառուի պարտականությունները ուժի մեջ են մտնում և իրականացվում են անկախ Վարկի փաստացի տրամադրումից և գործում են վաղաժամկետ մարման կամ սույն Պայմանագրի լուծման դեպքում: 3.1 Միջնորդավճար

As from the Signing Date, the Borrower shall, until the end of the Availability Period, pay to the Lender a commitment fee (the “Commitment Fee”) at the rate of 0,55 % (zero point fifty five per cent) per annum. The Commitment Fee shall be calculated based on the undrawn balance of the Credit Facility at the commencement of each calendar quarter and on the actual number of days elapsed and a year of 360 days and shall be paid quarterly in arrears by the Borrower to the Lender on March 31st, June 30th, September 30th and December 31st in each year. The first payment of Commitment Fee hereunder shall be made on the respective March 31st, June 30th, September 30th or December 31st next following the Signing Date.	Կնքման օրվանից Փոխառուն մինչև Գործողության ժամկետի ավարտը Փոխատուին վճարում է Միջնորդավճար՝ տարեկան 0.55% /զրո ամբողջ հիսունհինգ տոկոս/ դրույքաչափով: Միջնորդավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր եռամսյակը մեկ Վարկային գծի չօգտագործված մնացորդի նկատմամբ՝ փաստացի լրացած օրերի քանակի հիման վրա, տարին ընդունելով՝ 360 օր և Փոխառուի կողմից Փոխատուին է վճարվում եռամսյակը մեկ՝ յուրաքանչյուր տարվա մարտի 31-ին, հունիսի 30-ին, սեպտեմբերի 30-ին և դեկտեմբերի 31-ին: Սույնով Միջնորդավճարի առաջին վճարումը կատարվում է Կնքման օրվան հաջորդող՝ համապատասխանաբար մարտի 31-ին, հունիսի 30-ին, սեպտեմբերի 30-ին և դեկտեմբերի 31-ին:
3.2 Management Fee Subject to a payment request of the Lender (either in a written notice or via e-mail) to the Borrower with a copy to the Guarantor the Borrower shall, within 10 (ten) days after the Signing Date, pay to the Lender a management fee (the “Management Fee”) of 0.6 % (zero point six per cent) flat on the Credit Facility, being EUR 42.000,--	3.2 Սպասարկման վճար Փոխատուի կողմից Փոխառուին գրավոր ծանուցմամբ կամ էլ-փոստով վճարման վերաբերյալ դիմում ներկայացնելիս և Երաշխավորին դրա պատճենը ուղարկելիս Փոխառուն Կնքման օրվանից 10 օրվա ընթացքում Փոխատուին է վճարում Սպասարկման վճար՝ Վարկային գծի 0.6% տոկոսի չափով, այսինքն՝ 42.000 /քառասուններկու հազար/ ԵՎՐՈ:
3.3 OeKB Guarantee Charges and Costs The Borrower shall indemnify the Lender for all charges and costs payable by the Lender to OeKB in connection with the OeKB Guarantee. The Borrower shall pay to the Lender the OeKB Guarantee charges in compliance with OeKB’s imposition. After deduction of a development-policy motivated reduction of OeKB’s Guarantee	3.3 OeKB երաշխիքային վճարները և ծախսերը: Փոխառուն պարտավոր է OeKB-ի երաշխիքի հետ կապված Փոխատուի կողմից OeKB-ին կատարած բոլոր վճարումները և ծախսերը հատուցել Փոխատուին: Փոխառուն պարտավոր է Փոխատուին վճարել OeKB երաշխիքային վճարները և ծախսերը OeKB-ի պահանջներին համապատասխան: Զարգացման քաղաքականությամբ հիմնավորված՝ Ավստրիայի ֆինանսների

charges granted by the Austrian Ministry of Finance amounting to 40% of OeKB's up-front Guarantee charges OeKB shall charge Guarantee charges as follows: (i) an up-front premium to be denominated by OeKB, being approximately EUR 10.000 (Euro ten thousand); (ii) a fixed rate of 1 % p.a (one percent) payable quarterly in arrears according to OeKB guarantee. OeKB's calculation of the OeKB Guarantee charges is made on the assumption of a continuously increasing Loan during the Availability Period and the stipulated repayment schedule. Furthermore, OeKB's calculation is based on the actual number of days elapsed (assuming each month having 30 days) and a year of 360 days. The OeKB Guarantee charges are payable quarterly in arrears on March 31st, June 30th, September 30th and December 31st in each year. The first due date for payment of the OeKB Guarantee charges and the exact rate and amounts due will be determined by OeKB upon effectiveness of the OeKB Guarantee. The Lender shall provide a payment schedule of the Guarantee charges to the Borrower and to the Guarantor. In case there is any deviation from the initially assumed drawdown period and repayment schedule resulting in a higher risk (e.g., by extension of the term of the Loan granted hereunder), OeKB may recalculate the OeKB Guarantee charges accordingly. The Borrower will indemnify the Lender for any increase of the OeKB Guarantee charges caused by such deviation.	նախարարության կողմից OeKB-ի երաշխիքային վճարների նվազեցումից հետո, որը կազմում է 40%, OeKB-ի կողմից այդ վճարումները կատարվում են հետևյալ կերպ՝ (i) OeKB կողմից սահմանված առաջնային վճարումը կլինի մոտավորապես 10.000 /տասը հազար/ ԵՎՐՈ, (ii) ֆիքսված 1% տոկոսադրույք, որը ենթակա է վճարման եռամսյակը մեկ՝ համաձայն OeKB Երաշխիքի: OeKB երաշխիքային վճարների հաշվարկը կատարվում է շարունակաբար աճող Վարկի նկատմամբ՝ Գործողության ժամկետի և սահմանված մարման ժամանակացույցի ընթացքում: Բացի այդ, OeKB հաշվարկը հիմնվում է փաստացի լրացած օրերի վրա /ամիսը համարելով 30օր/ և տարին՝ 360 օր: OeKB երաշխիքային վճարները ենթակա են վճարման եռամսյակը մեկ՝ յուրաքանչյուր տարվա մարտի 31-ին, հունիսի 30-ին, սեպտեմբերի 30-ին և դեկտեմբերի 31-ին: OeKB երաշխիքային վճարման առաջին ամսաթիվը և ճշգրիտ տոկոսադրույքը և գումարի չափը սահմանվում է OeKB-ի կողմից՝ ի կատարումն OeKB Երաշխիքի: Փոխատուն պետք է Փոխառուին և Երաշխավորին տրամադրի Երաշխիքային վճարների վճարման ժամանակացույց: Ի սկզբանե սահմանված ժամանակահատվածի և մարման ժամանակացույցի խախտման դեպքում, որը կարող է համարվել բարձր ռիսկայնություն ունեցող /օրինակ՝ Վարկի տրամադրման ժամկետի երկարաձգում/, OeKB-ն կարող է համապատասխանաբար կատարել OeKB երաշխիքային վճարների վերահաշվարկ: Փոխառուն հատուցում է Փոխատուին այդ խախտման արդյունքում OeKB երաշխիքային վճարների ցանկացած ավելացման համար:
3.4 Expenses The Borrower shall pay any present or future stamp or registration duty or similar Taxes or charges or documentary Taxes or any other	3.4 Ծախսեր Փոխառուն պարտավոր է վճարել ցանկացած ներկա կամ ապագա գրանցման վճարը կամ պետական տուրքը կամ համանման այլ

excise or property Taxes, charges or similar levies, if any, which arise from any payment made under the Agreement or from the execution, delivery or registration of, or otherwise with respect to, this Agreement or any related agreements and shall from time to time on demand of the Lender indemnify the Lender against any liabilities, costs, claims and expenses resulting from any failure to pay or any delay in paying any such tax or charge. The Borrower shall pay to the Lender on its demand all costs and expenses (including, but not limited to, legal fees and travelling costs) incurred by the Lender (i) in the negotiation, preparation and completion of this Agreement and any related agreements limited to an amount of up to EUR 10,000.00; (ii) in the maintenance, protection and enforcement or preservation of any of its rights under this Agreement and under any related agreements; and (iii) in connection with any amendment, waiver, consent or suspension of rights requested by or on behalf of the Borrower. 3.5 Increased Costs The Borrower shall forthwith on demand by the Lender pay to the Lender the amount of any Increased Costs incurred by the Lender or any of its affiliates as a result of: (i) the introduction of, or any change in (or in the interpretation, administration or application of) any law, regulation, requirement, directive or request; or (ii) compliance with any law, regulation, requirement, directive or request made, enacted, imposed or applied after the Signing Date; or (iii) compliance with any capital adequacy requirement or any other request from or	հարկերն ու ծախսերը, ցանկացած այլ ակցիզային հարկերը կամ գույքահարկերը, ծախսերը կամ նման վճարումները, հարկերը, տուրքերը, եթե որևիցե մեկը, որն առաջանում է սույն Պայմանագրից կամ վերաբերելի այլ պայմանագրերից, դրանց իրականացումից, առաքումից կամ գրանցումից, ինչպես նաև պարտավոր է ժամանակ առ ժամանակ Փոխատուի պահանջով հատուցել վերջինիս պարտքերը, պահանջները, ծախսերը՝ այդ հարկերի կամ վճարների վճարման պարտականության խախտման կամ ուշացման դեպքում: Փոխառուն Փոխատուի պահանջով վճարում է բոլոր ծախսերը /ներառյալ, բայց չսահմանափակվելով իրավական վճարներով և ճանապարհածախսով/, որոնք առաջանում են Փոխատուի կողմից (i) սույն Պայմանագրի կամ վերաբերելի այլ պայմանագրերի բանակցությունների, նախապատրաստման և ավարտման հետևանքով՝ մինչև 10,000.00 ԵԱԴՈՒ-ի չափով, (ii) սույն Պայմանագրով կամ վերաբերելի այլ պայմանագրերով սահմանված իրավունքների սպասարկման, պաշտպանության և կիրարկման կամ պահպանման, և (iii) Փոխառուի անունից կամ իր կողմից պահանջված իրավունքների փոփոխության, հրաժարման, համաձայնության կամ կասեցման հետ կապված դեպքերում: 3.5 Հավելյալ ծախս Փոխառուն Փոխատուի պահանջով անհապաղ վճարում է Փոխատուին ցանկացած հավելյալ ծախսի գումարը, որն առաջացել է Փոխատուի կամ այլ փոխկապակցված անձանց կողմից՝ (i) ցանկացած օրենքի, կանոնակարգի, պահանջի, հրահանգի կամ պահանջի ներդրման կամ փոփոխման /մեկնաբանության, կառավարման կամ կիրառման/, (ii) պայմանագրի ստորագրումից հետո ուժի մեջ մտած, կիրառված ցանկացած օրենքի, կանոնակարգի, պահանջի, հրահանգի կամ խնդրանքի համապատասխանության, (iii) կապիտալի
--	--

requirement of any relevant central bank or other fiscal, monetary or other authority generally applicable to financial institutions and/or banks. In this Agreement "Increased Costs" means: (i) an additional or increased cost; (ii) a reduction in the rate of return from the facility under this Agreement or on the Lender's (or its affiliate's) overall capital; or (iii) a reduction of any amount due and payable under this Agreement, which is incurred or suffered by the Lender or any of its affiliates to the extent that it is attributable to the Lender having entered into its commitment under this Agreement or funding or performing its obligations under this Agreement. A certificate as to the amount of such Increased Costs, submitted to the Borrower by the Lender, shall constitute conclusive evidence for such Increased Costs.	համարժեքության պահանջի կամ ցանկացած այլ պահանջի կամ կենտրոնական բանկի կամ այլ ֆինանսական, դրամական կամ ֆինանսական հաստատությունների կամ բանկերի նկատմամբ սովորաբար կիրառելի իրավունքների համապատասխանության արդյունքում: Սույն Պայմանագրում «հավելյալ ծախս» նշանակում է (i) լրացուցիչ կամ բարձրացված արժեքը, (ii) սույն Պայմանագրի համաձայն Փոխատուի /կամ փոխկապակցված անձի/ ընդհանուր կապիտալից վերադարձվող տոկոսադրույքի նվազեցումը, կամ (iii) սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած գումարի վճարումը, որն առաջացել է Փոխատուի կամ փոխկապակցված անձանց կողմից այնքանով, որքանով դա վերագրելի է Փոխատուին սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար: Փոխատուի կողմից Փոխառուին տրված հավելյալ արժեքի վերաբերյալ տեղեկանքը համարվում է այդպիսի հավելյալ արժեքների վերջնական և բավարար ապացույց:
4 REPAYMENT 4.1 Repayment The Loan granted hereunder shall be repaid by the Borrower in 26 (twenty six) equal consecutive semi-annual repayment instalments. The first such repayment instalment shall be due 66 (sixty six) months after the Starting Point, but in any case 78 (seventy eight) months after the date of the Effective Date of the Credit Facility. The Lender will provide the Borrower and the Guarantor with a repayment schedule once the actual repayment dates are fixed in accordance with the terms hereof. If any repayment date is not a Business Day, payment shall be done on the preceding Business Day. Any repayment instalments shall be credited to the Facility Account.	4. ՄԱՐՈՒՄ 4.1 Մարում Սույնով տրամադրված Վարկը վճարվում է Փոխառուի կողմից 26 /քսանվեց/ հավասար անընդմեջ կիսամյակային մարումներ կատարելով: Առաջին մարումը կատարվում է Սկսվելու օրվանից 66 ամիս հետո, բայց բոլոր դեպքերում Ուժի մեջ մտնելու պահից հետո 78-րդ ամսվանից սկսած: Փոխատուն Փոխառուին և Երաշխավորին տրամադրում է մարման ժամանակացույցը՝ համաձայն սույն պայմաններով նախատեսված փաստացի վճարման ամսաթվերի: Եթե ցանկացած մարման օր ոչ աշխատանքային օր է, մարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը: Բոլոր վճարումները կատարվում են Հաշվեհամարին:

4.2 Optional Prepayment and Cancellation The Borrower may, by prior written notice to the Lender and subject to the prior unconditional consent of the Lender and of OeKB, for which consent the Lender shall apply upon request by the Borrower, prepay the Loan in accordance with the terms and conditions specified by the Lender and OeKB. The Borrower shall indemnify the Lender against all breakage costs (including, but not limited to, costs related to the OeKB Refinancing Agreement and the OeKB Guarantee) incurred by the Lender due to any such optional prepayment. For the avoidance of doubt, notwithstanding the reduced principal amount respectively repayment instalments caused by such prepayment, OeKB Guarantee charges may be asked for by OeKB on the basis of the initial payment schedule. An adjustment of these OeKB Guarantee charges is subject to the approval of OeKB to reduce the OeKB Guarantee charges accordingly. Any such prepayment shall, if made during the Availability Period, reduce the amount of the Credit Facility by an amount equal to such prepayment, and references to the Credit Facility in this Agreement shall thereafter be deemed to be references to the amounts as so reduced. Any such prepayment shall, if made after the expiry of the Availability Period, be applied towards the next due repayment instalments outstanding under this Agreement. Repaid or prepaid amounts may not be re-borrowed. The amount of the Credit Facility undrawn at the end of the Availability Period shall be	4.2 Վաղաժամկետ մարում կամ կասեցում: Փոխառուն կարող է Փոխատուին գրավոր տեղեկացնելու և Փոխատուի ու OeKB-ի անվերապահ համաձայնության դեպքում, որի ստացման համար Փոխառուն դիմում է Փոխառուի պահանջով, վաղաժամկետ մարել Վարկը՝ համաձայն Փոխատուի և OeKB-ի կողմից սահմանված կարգի և պայմանների: Փոխառուն հատուցում է Փոխատուին վաղաժամկետ մարման տույժերը /ներառյալ, բայց չսահմանափակվելով այն ծախսերով, որոնք վերաբերում են OeKB վերաֆինանսավորման պայմանագրին և OeKB Երաշխիքին/, որոնք առաջացել են Փոխատուի կողմից վաղաժամկետ մարման հետևանքով: Տարակարծությունից խուսափելու նպատակով, չնայած նշված վաղաժամկետ վճարման արդյունքում կատարված մարումներին համապատասխան նվազեցված մայր գումարին, OeKB Երաշխիքային վճարները կարող են OeKB-ի կողմից պահանջվել հիմնական վճարման ժամանակացույցի հիման վրա: Այս Երաշխիքային վճարների ճշգրտումը ենթակա է հաստատման OeKB-ի կողմից՝ համապատասխանաբար նվազեցնելով OeKB Երաշխիքային վճարները: Գործողության ժամկետում կատարված ցանկացած վաղաժամկետ մարում նվազեցնում է Վարկային գծի գումարը այդ վաղաժամկետ մարված գումարին համապատասխան և սույն Պայմանագրով Վարկային գիծը այսուհետ համարվում է այդ գումարով նվազեցված: Գործողության ժամկետի ավարտից հետո կատարված ցանկացած վաղաժամկետ մարում կիրառվում է սույն Պայմանագրով սահմանված հաջորդ կանխավճարի մարման նկատմամբ: Վերադարձված կամ վաղաժամկետ մարված գումարները չեն կարող կրկնակի փոխառությամբ տրվել: Գործողության ժամկետի ավարտից հետո Վարկային գծի չօգտագործված գումարը
--	--

automatically cancelled at the close of business in Vienna on the last day of such Availability Period. 4.3 Illegality If, in any applicable jurisdiction, it is or becomes unlawful for the Lender to perform any of its obligations as contemplated by this Agreement or to fund or maintain a Borrowing or the Loan, then: (i) the Lender shall notify the Borrower accordingly; and (ii) the Borrower shall forthwith prepay the Loan, but not later than 20 Business Days after it becomes unlawful for the Lender to perform its obligations under this Agreement; and (iii) the Credit Facility shall forthwith be cancelled. 5 PAYMENTS 5.1 Notice of Payment Not later than 14 (fourteen days) prior to each due date of Commitment Fee and OeKB Guarantee charges or, as the case may be, repayment date, the Lender shall notify in parallel the Borrower and the Guarantor of such amounts as are due to be paid by the Borrower to the Lender in accordance with the provisions of this Agreement, provided that failure to give such notice as aforesaid shall not relieve the Borrower of its obligation to make payments of such amounts as aforesaid when due. 5.2 Method of Payment On each payment date, the Borrower shall make payment of the amounts due on such date in Vienna, value the relevant due date.	ինքնաբերաբար չեղարկվում է գործարքի ավարտին՝ Գործողության ժամկետի վերջին օրը Վիեննայում: 4.3 Անօրինականությունը: Եթե ցանկացած կիրառելի օրենսդրություն ճանաչվում է ուժը կորցրած, Փոխատուի՝ սույն Պայմանագրով նախատեսված որևէ պարտականություն իրականացնելու, Փոխառությունը կամ Վարկը ֆինանսավորելու ու պահպանելու համար, ապա (i) Փոխատուն համապատասխանաբար տեղեկացնում է Փոխառուին, (ii) Վարկառուն պետք է անհապաղ վճարի Վարկի կանխավճար , բայց ոչ ուշ, քան 20 Աշխատանքային օրվա ընթացքում, նրանից հետո, երբ պարտատիրոջ համար դառնում է անօրինական սույն Համաձայնագրի համաձայն իր պարտավորությունների կատարումը ; և (iii) Վարկային գիծը անհապաղ վերացվում է: 5. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ: 5.1 Վճարման ծանուցում: Ոչ ուշ քան 14 /տասնչորս/ օր մինչև յուրաքանչյուր Միջնորդավճարի և ՕեKB Երաշխիքային վճարի վճարման օրը կամ փոխհատուցման օրը, Փոխատուն ծանուցում է Փոխառուին վերջինիս կողմից վճարման ենթակա գումարների վերաբերյալ՝ համաձայն սույն Պայմանագրի դրույթների՝ պայմանով, որ վերոնշյալ ծանուցում տալու պարտականության խախտումը չի ազատում Փոխառուին սահմանված ժամկետում իր վճարման պարտականությունը կատարելուց: 5.2 Վճարման միջոց: Յուրաքանչյուր վճարման օր, Փոխառուն գումարների վճարումը կատարում է այդ օրվա դրությամբ Վիեննայում գործող փոխարժեքին համապատասխան:
--	--

Unless otherwise regulated herein, if a payment date shall not be a Business Day, payment shall be made on the preceding Business Day. All payments of amounts due by the Borrower to the Lender shall be made in freely convertible and transferable EUR. The Borrower hereby authorizes the Lender, if and to the extent payment is not made when due under this Agreement, to charge from time to time against any or all of the Borrower's accounts with the Lender any amount so due. To the extent that such accounts are not maintained in the currency due, the Lender is authorized to charge an amount in any other currency equal to the equivalent in such other currency of the currency due. The equivalent of such currency shall be determined by the Lender at the market rate of exchange in its usual course of business.	Եթե սույնով այլ բան կարգավորված չէ և եթե վճարման օրը ոչ Աշխատանքային օր է, վճարումը պետք է իրականացվի հաջորդ աշխատանքային օրը: Փոխառուի կողմից Փոխատուին կատարված բոլոր վճարումները իրականացվում են ազատ փոխարկելի և փոխանցելի եվրոյով: Եթե սույն Պայմանագրով սահմանված կարգով Փոխառուն վճարում չի իրականացրել, ապա Փոխառուն սույնով լիազորում է Փոխատուին, որ վերջինս իրավունք ունի ժամանակ առ ժամանակ Փոխառուի ցանկացած կամ բոլոր հաշիվներից պահել գումար: Եթե այդ հաշիվների գումարի արժույթը չի համապատասխանում պարտավորության արժույթին, ապա Փոխատուն իրավասու է գանձել այլ արժույթով այնքան գումար, որքան անհրաժեշտ է պարտավորության արժեքին համարժեք գումար ստանալու համար: Նման արժույթի համարժեքությունը որոշվում է Փոխատուի կողմից շուկայական փոխարժեքով՝ համաձայն գործարար շրջանառության սովորույթի:
5.3 Payments free of Withholding Taxes and other Charges All payments made by the Borrower under this Agreement shall be calculated and be made in full without (and free and clear of any deduction for) set-off or counterclaim The Borrower hereby waives any and all rights of set-off or counterclaim which it may have with regard to any amount due to the Lender and agrees that it will not withhold payment for any reason whatsoever of any amounts due for payment. In particular, the Borrower shall not withhold payment of amounts due to the Lender on the grounds that it or the Project Buyer has any claims, rights of action, entitlements or demands against the Project Exporter or other suppliers in relation to the Project or the Project Delivery Contract.	5.3 Ուղղակի և անուղղակի հարկերից և այլ ծախսերից ազատ վճարումներ: Սույն Պայմանագրով սահմանված Փոխառուի կողմից կատարված բոլոր վճարումները հաշվարկվում և կատարվում են ամբողջությամբ /առանց նվազեցման/ առանց հաշվանցման: Սույնով Փոխառուն հրաժարվում է հաշվանցի բոլոր իրավունքներից, որոնք կարող են կապված լինել Փոխատուի ցանկացած գումարի պարտավորության հետ, և համաձայնվում է, որ պահում չի կատարի ցանկացած պատճառով վճարման ենթակա ցանկացած գումար: Մասնավորապես Փոխառուն չպետք է դադարի կատարել Փոխատուի նկատմամբ գումարի վճարման պարտականությունը, այն հիմքով, որ ինքը կամ Ծրագրի Գնորդը ունեն որևէ պահանջ, գործողության իրավունք, իրավասություններ կամ պահանջներ Ծրագրի

